## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԳԵՎՈՐԳ ՄԱՆԹԱՇՅԱՆԻ ԹԱԻԼԱՆԴԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ (Ք. ԲԱՆԳԿՈԿ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**

   Գևորգ Մանթաշյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջին տեղակալ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Թաիլանդի Թագավորություն (քաղաք Բանգկոկ), 2023թ. սեպտեմբերի 18-ից 20-ը:

4. **Հրավիրող կողմը.**

   ՄԱԿ-ի Ասիա-խաղաղօվկիանոսյան տնտեսական և սոցիալական հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով, (UNESCAP)):

5. **Գործուղման նպատակը.**

   Մասնակցություն ս.թ. հունիսի 18-ից 19-ը Բանգկոկում կայանալիք «Թվային ներառման և համայնքների զարգացման տարածաշրջանային աշխատաժողով»-ին՝ քննարկելու տարածաշրջանի պետություններում հասարակության, տնտեսության, պետական կառավարման ոլորտում թվայնացման գործընթացը և առկա մարտահրավերները: Հանձնաժողովը 2016թ. գործարկել է «Ասիա-խաղաղօվկիանոսյան տեղեկատվական գերարագընթաց կապուղի» նախաձեռնությունը, որն ուղղված է տարածաշրջանի պետությունների թվային փոխակերպմանը, թվային տարբերությունների հաղթահարմանը, թվային տեխնոլոգիաների և տվյալների օգտագործմանը:

6. **Քննարկված թեմաները.**

Այցի շրջանակում կայացած հանդիպումների ընթացքում քննարկվել են երկկողմ և բազմակողմ համագործակցության հնարավորությունները, ոլորտային զարգացման նպատակով համատեղ ծրագրեր իրականացնելու ներուժն ու հեռանկարները:

**7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Թաիլանդի Թագավորություն (այսուհետ՝ Թաիլանդ) այցի ընթացքում ս.թ. սեպտեմբերի 18-ին ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջին տեղակալ Գևորգ Մանթաշյանը մասնակցել է «Թվային ներառման և համայնքների զարգացման տարածաշրջանային աշխատաժողով»-ի բացման արարողությանը, ինչպես նաև մասնակցել կազմակերպված քննարկումներին, պատասխանել մի շարք հարցերի՝ ընդգծելով թվայնացման ոլորտում պետությունների միջև փորձի փոխանակման կարևորությունը, թվային փոխակերպման և տեխնոլոգիաների ազդեցությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտների վրա:

Այցի ընթացքում Գևորգ Մանթաշյանը հանդիպումներ է ունեցել մի շարք ոլորտային նախարարությունների, դեսպանությունների, միջազգային խոշոր ընկերությունների, ոլորտային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ (Մոնղոլիայի թվային զարգացման և հաղորդակցության փոխնախարար Էրխեմբաատար Ջարգալցենգել, Թաիլանդում Մոնղոլիայի դեսպան, «UNESCAP»-ի մշտական ներկայացուցիչ Տումուր Ամարսանա, Թաիլանդում Ղազախստանի Հանրապետության դեսպանության առաջին քարտուղար, «UNESCAP»-ի ներկայացուցչի տեղակալ Վիտալի Ալեքսանդրով, «Frontier Markets, APAC ChromeOS Flex, Global», «Gwangju» Գիտության և Տեխնոլոգիայի Ինստիտուտ, «KDI» Դպրոցի բաց կառավարման և նորարարության լաբորատորիա, «MG» կորեական համայնքային վարկային կոոպերատիվների ֆեդերացիա և այլն): Քննարկվել են բարձր տեխնոլոգիաների և թվայնացման ոլորտներում համագործակցության ընդլայնման, թաիլանդական ընկերությունների համար Հայաստանի ներդրումային գրավչության բարձրացման, երկու պետություններում գործող ընկերությունների միջև համատեղ ձեռնարկատիրական ներուժի զարգացման և փորձի փոխանակման հնարավորությունները:

Աշխատաժողովի շրջանակում Գևորգ Մանթաշյանը ներկայացրել է նաև ՀՀ թվայնացման 2021-2025թթ. ռազմավարության շրջանակում իրականացվող աշխատանքները, ՀՀ

տեխնոլոգիական էկոհամակարգի զարգացման նպատակով իրագործվող ծրագրերը և տարածաշրջանի պետությունների հետ համագործակցության հիմնական ուղղությունները:

«Թվային ներառման և համայնքների զարգացման տարածաշրջանային աշխատաժողով»-ի շրջանակում ս.թ. սեպտեմբերի 19-ին Գևորգ Մանթաշյանը ներկայացրել է 2023թ. նոյեմբերի 8-ից 9-ը Երևանում կազմակերպվող Հանձնաժողովի կողմից «Ասիա-խաղաղօվկիանոսյան տեղեկատվական գերարագընթաց կապուղի» նախաձեռնության շրջանակում իրականացվող աշխատանքների նախապատրաստման վերաբերյալ շնորհանդես, ինչպես նաև Հանձնաժողովի ներկայացուցիչների հետ քննարկել Կոմիտեի 7-րդ նիստի կազմակերպմանն առնչվող օրակարգային մի շարք հարցեր:

**8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Այցի ընթացքում պայմանավորվածություններ են ձեռք բերվել՝ շարունակելու քննարկումները համագործակցության ընդլայնմանն ուղղված ծրագրեր իրականացնելու վերաբերյալ:

**9. Ստորագրությունը, ամսաթիվը.**

**ԳԵՎՈՐԳ ՄԱՆԹԱՇՅԱՆ**

**25.09.2023թ.**